ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ԱԶԳԱՅԻՆ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ (ՀԱՆ)
ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՁԵԿՈՒՅՑԸ

ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Գործող անձ՝	**Խաչատուր Սուքիասյան**

50

ՀԱՆ-ի սույն հետաքննությունը վերաբերում է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Խաչատուր Սուքիասյանին: Խոսքը ոչ թե մասնավոր գործարարի կամ 1990-ականների նախկին օլիգարխի մասին է, այլ իշխանության գործող ներկայացուցչի, ում բիզնես շահերն ու հանրային դիրքորոշումներն ուղղակի ազդեցություն են ունենում ռազմավարական զգայուն ոլորտներում պետական որոշումների վրա:

Նա երբեք չի ուշացել՝

ո՛չ 1990-ականների սեփականաշնորհումից,

ո՛չ հայ-թուրքական բիզնես նախաձեռնություններից,

ո՛չ խորհրդարանից՝ արդեն իսկ որպես դոլարային միլիոնատեր,

ո՛չ 2018 թվականից հետո իրականացվող պետական գնումներից,

ո՛չ Հայաստանի Հանրապետության «թիվ 1 բորտի» շահագործումից:

Եվ այսօր նա դարձյալ առաջինն է երկիրը Թուրքիայից և Ադրբեջանից վտանգավոր տնտեսական կախվածության մեջ ներքաշելու գործում:

Խաչատուր Սուքիասյանի պատմությունը «հաջողակ գործարարի», «պրագմատիկ քաղաքական գործչի» կամ «ժամանակին համահունչ քայլող բարեփոխիչի» պատմություն չէ: Սա մի մարդու պատմություն է, որը երեք տասնամյակ շարունակ համակարգված կերպով հայտնվել է այն կետերում, որտեղ պետական որոշումները վերածվում են մասնավոր օգուտի, իսկ արտաքին տնտեսական «նախաձեռնությունները»՝ ճնշման գործիքների:

2021 թվականին Սուքիասյանը խորհրդարան մտավ արդեն բազմամիլիարդանոց կարողությամբ՝ հայտարարագրելով միլիոնավոր դոլարներ, եվրոներ և դրամներ: Նա չեկավ կարիերայի կամ ամբիոնի համար: Նա եկավ՝ ունենալով կապիտալ: Եվ հենց դրանից հետո նրա բիզնես կառույցները ստացան արագացված հասանելիություն պետական ռեսուրսներին՝ պետական

պայմանագրերին, շուկաներին, կարգավորող արտոնություններին, որոնք այլոց համար մնում էին անհասանելի կամ պահանջում էին քաղաքական հավատարմություն: Ձևականորեն օրենքը պահպանված է: Փաստացի՝ օրենքի իմաստը ոչնչացված է:

Վառելիք, ապահովագրություն, պետական ավտոպարկեր, հողատարածքներ, կառուցապատում, ավիացիա՝ բոլոր առանցքային ոլորտներում Սուքիասյանների ընտանիքի հետ փոխկապակցված կառույցները հայտնվել են պետությունից օգուտ ստացողների առաջին շարքերում: Կամ միակն են եղել: Կամ նրանք, ում համար մրցակցությունը վերածվել է ձևականության:

Նրա ընտանիքի հետ կապված ավիաընկերությունը դարձավ Հայաստանի Հանրապետության «թիվ 1 բորտի»՝ պետական ինքնիշխանության խորհրդանիշի և երկրի վարչապետի օդանավի օպերատորը, ինչը փաստացի բարձրագույն իշխանության շարժունակությունը դրեց մասնավոր կառույցից կախվածության մեջ: Նույն ավիաընկերությունն առաջինն ստացավ թուրքական իշխանությունների թույլտվությունը՝ Երևան-Ստամբուլ չվերթեր իրականացնելու համար: Նախագիծը ներկայացվում էր որպես տնտեսական և հումանիտար, սակայն հենց սկզբից վնասաբեր էր և լիովին կախված Անկարայի որոշումներից: 2023 թվականին Թուրքիան փակեց իր օդային տարածքը, և երթուղին փաստացի վերացվեց: Ինքնիշխանությունն ավարտվեց այնտեղ, որտեղ սկսվեց թուրքական «անջատիչ» կոճակը:

Այսօր այս սցենարը վերարտադրվում է էլ ավելի զգայուն ոլորտում՝ վառելիքի մեջ: «Էժան բենզինի» և «բյուջեի խնայողության» կարգախոսների ներքո Հայաստանն սկսեց գնումներ կատարել Ադրբեջանի պետական SOCAR ընկերությունից, որն ադրբեջանական պաշտպանական բյուջեի հիմնական ֆինանսական սյուներից մեկն է: Ներմուծումն իրականացվել է նաև Սուքիասյանների ընտանիքի ընկերության կողմից: Սա նշանակում է հայկական միջոցների ուղղակի ներգրավում մի պետության տնտեսության մեջ, որի հետ Հայաստանը գտնվում է հակամարտության մեջ, և որն այդ

եկամուտները բացահայտորեն ներդնում է ռազմական մեքենայի մեջ:

Սուքիասյանը չի կարող չհասկանալ հետևանքները: Նա արդեն տեսել է, թե ինչպես է Թուրքիան օգտագործում տնտեսական և ենթակառուցվածքային ճնշման լծակները: Նա գիտի, որ Հարավային Կովկասի տարածաշրջանում «ժամանակավոր օգուտը» գրեթե միշտ ավարտվում է քաղաքական վերջնագրով: Այնուամենայնիվ, նա կրկին հանդես է գալիս որպես կախվածության մոդելի հաղորդակ՝ այս անգամ արդեն էներգետիկ, համակարգային և պոտենցիալ անդառնալի:

Սա պատահականությունների շղթա չէ: Նրա ներգրավվածությունը հայ-թուրքական տնտեսական նախաձեռնություններում արձանագրվում է առնվազն 1996 թվականից՝ UMBA-ի՝ անդրսահմանային երկխոսության համար աշխատող առաջին բիզնես հարթակներից մեկի ստեղծման պահից: Այն ժամանակ նա առաջինն էր: Այսօր նա դարձյալ առաջինն է: Փոխվում են ոլորտները, չի փոխվում տրամաբանությունը:

Մենք հրապարակում ենք հետաքննություն ոչ թե մասնավոր գործարարի կամ սկանդալների հավաքածուի մասին:

Մենք հրապարակում ենք հետաքննություն մի մոդելի մասին, որտեղ անձնական «պրագմատիզմը» փոխարինում է ազգային շահերին, իսկ պետությունն աստիճանաբար սովորում է կախվածությանը՝ որպես նորմայի**:**

Խաչատուր Սուքիասյան. քրեական կապիտալ, քաղաքականություն և ազդեցության սահմանագիծը

Հասկանալու համար, թե ինչպես Խաչատուր Սուքիասյանը հայտնվեց մի կետում, որտեղ մասնավոր բիզնեսը ձևավորում է

պետական կախվածություններ, անհրաժեշտ է վերադառնալ կապիտալի նախնական կուտակման շրջանին:

Հենց 1990-ական թվականներին՝ **վաուչերային սեփականաշնորհման** և ուժային կլանների ձևավորման ժամանակահատվածում, դրվեց այն մոդելը, որտեղ տնտեսական ազդեցությունն ուղղակիորեն փոխակերպվում էր քաղաքականի: Այս փուլը դիտարկվում է ոչ թե որպես կենսագրություն, այլ որպես բանալի՝ հասկանալու համար ազդեցության հետագա կուտակման տրամաբանությունը:

90-ականների կեսերին ուժի գլխավոր կենտրոն դարձավ ՆԳ նախարար **Վանո Սիրադեղյանի** կլանը: Այս շրջանակի ներսում ուժեղացավ Սուքիասյանը, ում լրատվամիջոցներն անվանում են առաջին քրեական օլիգարխ և կապիտալի ու իշխանության սերտաճման խորհրդանիշ:

1994 թվականը և վաուչերային սեփականաշնորհումը ծնեցին **նոմենկլատուրային կապիտալիզմը**: Սուքիասյանն առաջինն էր, որ ստացավ պետական արտոնություններ և փորձարկեց բիզնեսի ոչ մրցակցային մոդելներ՝ գլխավորելով ընտանեկան **«Սիլ Գրուպ»** հոլդինգը: 90-ականների կեսերին համակարգը ներառում էր շուրջ 25 ընկերություն, որոնց թվում էին «Բջնի» հանքային ջրերի գործարանը (մինչև 2008թ.), «Գոֆրոտարան», Երևանի կահույքի գործարանը, «Պոլիպլաստը», Սևանի ալրաղացը և այլ ակտիվներ:

«ՍԻԼ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ

Տպելու տարբերակ | XML տարբերակ

Ամ 1996-10-25 | Ամ 1998-09-16 | Ամ 1998-10-22 | Ամ 2000-08-24 | Ամ 2001-12-07 | Ամ 2002-07-25 | Ամ 2003-07-14
Ամ 2004-04-16 | Ամ 2004-05-19 | Ամ 2005-04-25 | Ամ 2006-10-10 | Ամ 2006-12-19 | Ամ 2006-12-29 | Ամ 2008-03-27
Ամ 2008-05-27 | Ամ 2009-03-12 | Ամ 2009-06-25 | Ամ 2009-07-09 | Ամ 2009-08-03 | Ամ 2009-09-26 | Ամ 2009-12-09
Ամ 2009-12-18 | Ամ 2010-02-26 | Ամ 2010-03-09 | Ամ 2010-03-16 | Ամ 2010-10-29 | Ամ 2012-03-06 | Ամ 2012-06-13
Ամ 2013-03-04

Կարգավիճակ **Լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**

Գրանցող մարմին **ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստր**

Գրանցման համար **278.110.01809** | Գրառման ամսաթիվ **2013-03-04** | ՁԿԴ **37223516**

Հիմնադրման ամսաթիվ **1996-10-25** | ՀՎՀՀ **00413996** | Կանոնադրական կապիտալը ՀՀ Դրամով **71,900,400**

Մասնակիցներ

Անուն ազգանուն / Անվանում	Մուտք գործելու ամսաթիվ	Դուրս գալու ամսաթիվ	Հասցե	Բաժնեմասեր	Բաժնեմասի արժեքը ՀՀ Դրամով
«ԲՋՆԻ» ՀԱՆՐԱՊԵՏՐԵՐԻ ԳՈՐԾ.	1998-09-16		[redacted]	0.005007 %	3600
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ	2004-04-16		[redacted]	24.998748 %	17974200
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ	2004-04-16		[redacted]	24.998748 %	17974200
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ	2004-04-16		[redacted]	24.998748 %	17974200
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ	2004-04-16		[redacted]	24.998748 %	17974200

1998 թվականին՝ Տեր-Պետրոսյանի հեռացումից հետո, նա կորցրեց «թիվ 1 օլիգարխի» կարգավիճակը, սակայն պահպանեց կապիտալն ու ազդեցությունը: 1999 թվականին դարձավ Ազգային ժողովի պատգամավոր (վերընտրվել է 2003 և 2007 թվականներին)՝ զարգացնելով բիզնեսը նոր էլիտաների պայմաններում՝ առանց նախկին մոնոպոլ արտոնությունների:

2008 թվականի փետրվարին նախագահական ընտրություններում հրապարակայնորեն աջակցեց Լևոն Տեր-Պետրոսյանին:

2008 թվականի մարտի 1-2-ի իրադարձություններից հետո (10 զոհ, ավելի քան 200 վիրավոր) նա զրկվեց անձեռնմխելիությունից, հեռակա կարգով կալանավորվեց, հայտարարվեց հետախուզում, և դիմեց փախուստի:

2009-ին նա կամավոր հանձնվեց, կալանքը փոխարինվեց չհեռանալու մասին ստորագրությամբ: 2011 թվականին գործը կարճվեց՝ ապացույցների բացակայության պատճառով:

Լրատվամիջոցները նշում էին, որ նա պայմանավորվածություն է ձեռք բերել Սարգսյանի հետ և խուսափել քաղբանտարկյալի կարգավիճակից, սակայն ընտանիքը մասնակիորեն տուժել է:

Նրա ընդհատակում գտնվելու ժամանակահատվածում իշխանությունները ստուգումներ նախաձեռնեցին և խլեցին «Բջնի» գործարանը. ձեռնարկությունը սնանկացավ, գույքը հանվեց աճուրդի և երկրորդ փուլում ավելի քան 4 միլիարդ դրամով բաժին հասավ սարգսյանական պատգամավոր Ռուբեն Հայրապետյանին («Նեմեց Ռուբո»): Սուքիասյանը հայց ներկայացրեց ՄԻԵԴ՝

գործընթացն անվանելով քաղաքական հետապնդում և պահանջելով փոխհատուցում բիզնեսին հասցված վնասի համար:

2010 թվականի նոյեմբերից մինչև 2011 թվականի հոկտեմբերը բնակվել է Գերմանիայում, այնուհետև վերադարձել Երևան:

2016 թվականին, «Ռոսիա Մոլ» առևտրի կենտրոնի բացմամբ, Սուքիասյանի կենսագրության ընդդիմադիր փուլը մամուլում համարվում է ավարտված:

Խաչատուր Սուքիասյան. 90-ականների վերաբաժանումից մինչև հեղափոխություն

1990-ականների վերջից մինչև 2018 թվականն ընկած ժամանակահատվածը Խաչատուր Սուքիասյանի համար դարձավ քաղաքական հարմարվողականության փուլ: Կորցնելով առանցքային օլիգարխի կարգավիճակը՝ նա պահպանեց կապիտալն ու ազդեցությունը՝ հաջորդաբար ներգծվելով իշխանության փոփոխվող կոնֆիգուրացիաների մեջ՝ Լևոն Տեր-Պետրոսյանից հետո ընկած ժամանակաշրջանից մինչև «թավշյա հեղափոխություն»:

Այս հատվածը կարևոր է նրանով, որ ցույց է տալիս՝ քաղաքական վարչակարգերի փոփոխությունը չէր կործանում նրա դիրքերը, այլ միայն փոխում էր դրանց իրացման ձևը:

2008 թվականին Սուքիասյանն ու Փաշինյանը հայտնվեցին Տեր-Պետրոսյանի կողմնակիցների նույն ճամբարում: 2013-2018 թվականներին նա ֆինանսավորում էր **Araratnews.am** և **Zarkerak.am** լրատվամիջոցները, որոնց գլխավոր խմբագիրն էր Ալեն Սիմոնյանը՝ այժմյան ԱԺ նախագահը և նրա քաղաքական սանը (պրոտեժեն):

2018 թվականի հեղափոխությանը Սուքիասյանն աջակցեց համերաշխությունից դրդված և Սարգսյանի հետ ունեցած հակամարտության պատճառով. իշխանափոխությունից հետո նա դարձավ նոր համակարգի շահառուն, սակայն առանց բարձր պաշտոններ զբաղեցնելու:

Գործնականում այդպես էլ չիրականացվեց «թավշյա իշխանությունների» խոստումը՝ բիզնեսը քաղաքականությունից տարանջատելու վերաբերյալ:https://www.youtube.com/watch?v=KjlhIVnW2l4

2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններում իշխանության ցուցակներում ընդգրկվեցին խոշոր գործարարներ, այդ թվում՝ Խաչատուր Սուքիասյանը և Գուրգեն Արսենյանը: Առանցքային հարցն այն չէր, թե ով էր գնում դեպի իշխանություն, այլ այն, թե ինչ կապիտալով: https://hetq.am/hy/article/131829

Խաչատուր Սուքիասյանի հայտարարագիրը թույլ է տալիս արձանագրել նրա՝ իշխանություն վերադառնալու մեկնարկային կետը՝ կապիտալի և ակտիվների այն ծավալը, որով նա մուտք գործեց խորհրդարան 2021 թվականին: Ստորև ներկայացված են հայտարարագրված տվյալները՝ առանց մեկնաբանությունների և գնահատականների:

Անշարժ գույք և բիզնես

Սուքիասյանը հայտարարագրել է 37 միավոր անշարժ գույք.

- **35-ը**՝ Երևանի Կենտրոն վարչական շրջանում
- **2-ը**՝ Կոտայքի մարզի Նուռնուս գյուղում

Երևանում նրան պատկանում է 21 կապիտալ շինություն՝ (ներառյալ գործարան, արտադրական բազա, կաթսայատուն և երեք ինքնակամ կառույց) և 14 հողամաս: Նուռնուսում՝ մեկ հողամաս և մեկ շինություն: Միայն մեկ օբյեկտ է գտնվում վարձակալության հիմունքներով, մնացածը՝ միանձնյա, համատեղ կամ բաժնային սեփականություն են:

Որպես աշխատավայր նա նշել է իր ընտանիքին պատկանող «ՍԻԼ Կոնցեռն» ՍՊԸ-ն, որտեղ զբաղեցնում է գործադիր տնօրենի խորհրդականի պաշտոնը: Հայտարարագրում շարժական գույք նշված չի եղել:

Արվեստի և հնաոճ իրերի հավաքածու

Սուքիասյանը հայտարարագրել է 29 միավոր թանկարժեք գույք (յուրաքանչյուրը 8 միլիոն դրամը գերազանցող), ընդ որում՝ բոլոր առարկաների փաստացի արժեքը նշված է որպես «արժեք չունի»:

Հայտարարագրում նշված են.

- Գրիգոր Խանջյանի **4 կտավ**
- Մարտիրոս Սարյանի **2 աշխատանք**
- Մինաս Ավետիսյանի **3 կտավ**
- Ժան Գարզուի (Գառնիկ Զուլումյան) **5 աշխատանք**

- Հակոբ Կոջոյանի **1 կտավ**
- Այլ նկարիչների **7 ստեղծագործություն**

Հայտարարագրված են նաև 5 ձեռագործ հնաոճ գորգ, հնաոճ ժամացույց և կահույքի մեկ առարկա:

Եկամուտներ. տարեկան շուրջ 240 մլն դրամ

2020 թվականի մայիսի 1-ից մինչև 2021 թվականի մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Սուքիասյանը եկամուտ է ստացել վեց աղբյուրից.

Շահաբաժիններ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ից — 57 մլն դրամ

Շահաբաժիններ «Նարեկ» ՍՊԸ-ից — 24,5 մլն դրամ

Աշխատավարձ «ՍԻԼ Կոնցեռն» ՍՊԸ-ում — շուրջ 12 մլն դրամ

Փոխառություն «Երևանի «Պոլիպլաստ» գործարան» ԲԲԸ-ից — 112 մլն դրամ

Եկամուտ Տիգրան Մեծի և Նար-Դոսի փողոցներում գտնվող անշարժ գույքի վարձակալությունից — 33 մլն դրամ

Դրամական միջոցներ

Հայտարարագիրը ներկայացնելու պահին Սուքիասյանը հայտարարագրել է.

4,8 մլրդ դրամ (շուրջ 9 մլն ԱՄՆ դոլար)

185 հազար եվրո

2 մլն ԱՄՆ դոլար

Բաժնեմասեր 11 ընկերություններում

Սուքիասյանը եղել է 11 ընկերությունների բաժնետեր և համասեփականատեր, այդ թվում՝

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ — 12,02% հասարակ և 5,75% արտոնյալ բաժնետոմսեր

«ՍԻԼ Ինշուրանս» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ և «Նարեկ» ՍՊԸ — 25-ական %

«ՍԻԼ Կոնցեռն» ՍՊԸ և «Երևանի ալրաղաց» ԲԲԸ — 24,9-ական %

«Երևանի «Զովք» գործարան» ԲԲԸ — 16%

«Երևանի «Պոլիպլաստ» գործարան» ԲԲԸ — 45,17%

«Բջնի Գրուպ» ՍՊԸ — 20%

«Ինլոբբի» ՍՊԸ — 90%

«Գլոբալ Մայնինգ» ՍՊԸ — 100%

«Առաջ» ՍՊԸ — 25%

2021 թվականին Սուքիասյանը խորհրդարան մտավ որպես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավոր՝ ձևականորեն բիզնեսը հանձնելով կառավարման: Դա թույլ տվեց շրջանցել պատգամավորների ձեռնարկատիրական գործունեության արգելքը, որը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 95):

Սուքիասյանների բիզնես կայսրության ծաղկումը 2018 թվականից հետո

2018 թվականի իշխանափոխությունից հետո Սուքիասյանի ընտանիքին պատկանող կառույցները ոչ միայն չկորցրին իրենց դիրքերը, այլև ընդհակառակը՝ ստացան արագացված հասանելիություն պետական ռեսուրսներին՝ արդեն նոր քաղաքական հռետորաբանության պայմաններում:

Այսպես կոչված «թավշյա հեղափոխությունից» հետո Սուքիասյանների ընտանիքի «ՍԻԼ Կոնցեռն» հոլդինգը դարձավ Հայաստանի ռեսուրսային և վարչական շուկաների հիմնական շահառուներից մեկը: Կապիտալի աճն ու պետական պայմանագրերի

ծավալների ավելացումը տեղի էր ունենում արդեն նոր քաղաքական իրողություններում և ուղեկցվում էր պետական գնումներին արագացված հասանելիությամբ: Հենց այս ժամանակաշրջանում ընտանիքի բիզնես կառույցները սկսեցին համակարգային ներկայություն ունենալ ռազմավարական զգայուն ոլորտներում, առաջին հերթին՝ վառելիքի բնագավառում:

Վառելիք և պետական պայմանագրեր

Ստորև ներկայացված են 2018 թվականից հետո ընկած ժամանակահատվածում **SIL Capital** հոլդինգի մեջ մտնող **«ՄեգաԹրեյդ»** ընկերության կողմից վառելիքի ոլորտում ստացված պետական պայմանագրերի վերաբերյալ տվյալները:

2020–2023 թվականների ընթացքում «ՄեգաԹրեյդ» ՍՊԸ-ն (հիմնադրվել է 2020 թվականի փետրվարի 7-ին և մտնում է SIL Capital հոլդինգի մեջ) կնքել է տասնյակ միլիոնավոր դոլարների մի քանի պետական պայմանագրեր, որոնց զգալի մասը ստացվել է առանց բաց մրցույթների:

- **2020թ. օգոստոսին** «ՄեգաԹրեյդ» ընկերությունը մուտք գործեց պետական գնումների դաշտ. առաջին խոշոր պատվիրատուն դարձավ Պաշտպանության նախարարությունը (շուրջ 1,3 միլիարդ դրամ):

- **2021թ. հոկտեմբերին** Պաշտպանության նախարարությունը «Մեգաթրեյդ»-ի հետ կնքեց 4000 տոննա բենզինի և 6042 տոննա դիզելային վառելիքի մատակարարման պայմանագիր՝ 5,45 միլիարդ դրամ արժողությամբ: Ընկերությունը մրցույթի մասնակիցների մեջ առաջարկել էր ամենացածր գինը:
- **Մինչև 2022 թվականը** «Մեգաթրեյդ» ընկերությունը պետական կառույցների հետ ստացել էր 9 պայմանագիր՝ 6,919 միլիարդ դրամ ընդհանուր արժողությամբ, որից 6,778 միլիարդ դրամը բաժին էր ընկնում Պաշտպանության նախարարությանը:
- **2022թ. նոյեմբերին** ընկերությունը ստացավ Չարենցավան քաղաքի համար բենզինի մատակարարման պայմանագիր՝ 6,24 միլիոն դրամ արժողությամբ: https://gnumner.minfin.am/website/images/original/c29a8c0e.pdf
  • 2024 թվականին «Մեգաթրեյդը» վառելիք է մատակարարել Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնին՝ 2,004 միլիոն դրամի պայմանագրով, իսկ Էջմիածնի համայնքապետարանի կարիքների համար կնքվել է 12 միլիոն դրամի պայմանագիր: https://gnumner.minfin.am/website/images/original/88073201.pdf
  •**2024 թվականին** պետական հաստատությունների հետ կնքվել են վառելիքի մատակարարման պայմանագրեր՝ **164,6 միլիոն դրամի** չափով:

- Ըստ **Hetq.am**-ի և **Armeps.am**-ի տվյալների՝ «Մեգաթրեյդ»-ի ծառայություններից օգտվել են նաև պետական այլ գերատեսչություններ, այդ թվում՝ Գլխավոր դատախազությունը, Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Քրեակատարողական ծառայությունը, Միասնական սոցիալական ծառայությունը և այլն:

Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիրը	Ընտրված մասնակից	ՀՎՀՀ կոդ կամ համարժեք	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը	Պայմանագրի գումարը առկա ֆինանսական միջոցներով
ՀՀ պաշտպանության նախարարություն	ԲՄԱՊՁԲ-20-7/17-3	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	00489503	13/08/2020	ԲՄ	հեղուկ վառելիք	1328592000	1328592000
ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-21/13-1	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	00489503	14/04/2021	ԳՀ	վառելիք	42086362.5	42086362.5
ՀՀ դատախազություն	ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-21/9	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	00489503	31/05/2021	ԳՀ	բենզին ռեգուլյար	66177000	66177000
«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ԳԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/14	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	00489503	22/07/2021	ԳՀ	վառելիք	3108000	3108000
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-10/21/1	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	00489503	22/07/2021	ԳՀ	Վառելիք	11308500	11308500
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-21/4	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	00489503	12/08/2021	ԷԱՃ	բենզին պրեմիում, բենզին ռեգուլյար	3543500	3543500
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-21/90-1	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	00489503	03/09/2021	ԷԱՃ	Վառելիքի ձեռքբերում	11373318	11373318
Մրցակցության պաշտպանության հանձնաժողով	ՄՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/32	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	00489503	08/09/2021	ԷԱՃ	բենզին /պրեմիում/	3214598.4	3214598.4
ՀՀ պաշտպանության նախարարություն	ՀԲՄԱՊՁԲ-21-7/1-2	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	00489503	01/10/2021	ՀԲՄ	բենզին, ռեգուլյար/ Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92)/ դիզելային վառելիք, ամառային/ Ամառային դիզ.վառելանյութ/	5449746480	5449746480

Ապահովագրություն և պետավտոպարկեր

Վառելիքի մատակարարման պայմանագրերի աճին զուգահեռ՝ Սուքիասյանների ընտանիքի բիզնես կառույցներն ամրապնդեցին իրենց դիրքերը նաև հարակից պետական սեգմենտներում: Դրանցից մեկը դարձավ պետական ավտոպարկերի ապահովագրությունը: 2018 թվականից հետո ընտանիքին պատկանող «ՍԻԼ Ինշուրանս» ապահովագրական ընկերությունը դարձավ պետական ավտոպարկերի հիմնական ապահովագրողը.

2018թ. սեպտեմբերին ձևակերպվել է ԱՊՊԱ պայմանագիր վարչապետի աշխատակազմի 90 ավտոմեքենաների համար՝ 2,313 միլիոն դրամի չափով.

2019թ. փետրվարի 1-ին ձևակերպվել է ԱՊՊԱ պայմանագիր 87 ավտոմեքենաների համար՝ 3,745 միլիոն դրամի չափով: https://factor.am/164404.html

- **2023 թվականին** ՀՀ ներքին գործերի նախարարությունը (Ոստիկանությունը) շուրջ **500,000 ԱՄՆ դոլար** է վճարել 2000 ոստիկանական ավտոմեքենաների մեկ տարվա ապահովագրության համար՝ առանց բաց մրցույթի: Գերատեսչությունը հայտարարել էր, թե մյուս ապահովագրողների առաջարկներն ավելի թանկ են եղել, սակայն չէր բացահայտել նրանց գները և չէր հիմնավորել մրցակցային ընթացակարգից հրաժարվելու պատճառը: https://www.azatutyun.am/a/32273060.html

Հող, սեփականաշնորհում և վերահսկողության թուլություն

2018 թվականից հետո ռեսուրսների վերաբաշխման նկարագրված մոդելի առանձին տարր դարձավ հողօգտագործման և սեփականաշնորհման ոլորտը, որտեղ վարչական որոշումների և թույլ վերահսկողության համադրությունը թույլ էր տալիս ձեռք բերել ակտիվներ շուկայականից էապես տարբերվող պայմաններով:

- **2024 թվականին** Ծաղկաձորում գտնվող շուրջ 4 հեկտար մակերեսով հողամասը գնվել է **413 միլիոն դրամ** կադաստրային արժեքով (մոտ 1,066 միլիոն ԱՄՆ դոլար), ինչը զգալիորեն ցածր է շուկայական արժեքից: Գնորդը «Սատուրնավան» ՍՊԸ-ն է, որը կապվում է իշխող կուսակցության պատգամավորների հետ և նախատեսում է այնտեղ կառուցել 12 մասնաշենքից բաղկացած բնակելի համալիր:
- Նախկինում գործարքում ներգրավված էր հոլդինգի հետ փոխկապակցված անձի բաժնեմաս, սակայն Խաչատուր Սուքիասյանը հերքել է այդ կապը՝ առանց ապացույցներ ներկայացնելու: https://hetq.am/ru/article/139330



Ինքնակամ շինություններ և տուգանքներ

Ընտրողական վերահսկողության և խորհրդանշական պատժամիջոցների պրակտիկան դրսևորվել է ոչ միայն խոշոր գործարքներում, այլև քաղաքաշինական վերահսկողության մակարդակում:

- **2022 թվականին** Ռոբերտ Սուքիասյանն ընդլայնել է **«Queen Burger»**-ի հետնամասում գտնվող շինությունը (Տիգրան Մեծի 17/4): Տուգանքը կազմել է 200,000 դրամ՝ 2,5 միլիոն դրամ հնարավոր տուգանքի մասին նախազգուշացմամբ, սակայն շինարարությունը չի դադարեցվել՝ վկայակոչելով մասնավոր տարածք լինելու հանգամանքը: 2023 թվականի վերակառուցումից հետո տանիքում բացվել է նոր սրճարան:
- **2024 թվականին «Pizza Di Roma»** սրճարանը (Խորենացի 31/2) վերակառուցվել է առանց թույլտվությունների Քաղաքապետարանն իրականացրել է վարչական քննություն և նշանակել տուգանք, սակայն օբյեկտը շարունակել է գործել:

Դատարան և վաղեմության ժամկետ՝ բռնագանձման փոխարեն

Առանձնակի ուշադրության է արժանի դատական պրակտիկան, որտեղ նույնիսկ արձանագրված խախտումը միշտ չէ, որ հանգեցնում է ակտիվների վերադարձին պետությանը:

2025 թվականին Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարանը մերժեց դատախազության հայցը՝ Երևանի կենտրոնում գտնվող պատմական շենքը վերադարձնելու վերաբերյալ, որն ավելի վաղ առևտրայնացվել էր փոխկապակցված **«Գռզո Պլազա»** ՍՊԸ-ի միջոցով: Որոշումը կայացվել է վաղեմության ժամկետի լրանալու պատճառով:

1990-ական թվականներին Սուքիասյանների ընտանիքին էր փոխանցվել Աբովյան և Արամի փողոցների խաչմերուկում գտնվող այս պատմական շենքը՝ վերակառուցման նպատակով, խորհրդանշական գումարով՝ **5,655 դոլարով**: Հետագայում օբյեկտը հանվել է պատմության և մշակույթի հուշարձանների ցանկից և վերածվել առևտրի կենտրոնի՝ սեփականատիրոջը պահպանելով «Գռզո Պլազա» ՍՊԸ-ի միջոցով:

Այս դեպքը լուսաբանում է, թե ինչպես իրավական սահմանափակումները և վաղեմության ժամկետները կարող են փաստացիորեն ամրագրել շահավետ սեփականաշնորհման արդյունքները, նույնիսկ այն դեպքերում, երբ խախտումները ճանաչվում են հաստատված, բայց չեն հանգեցնում ակտիվի վերադարձին պետությանը:

2025 թվականի «Ալմաստների սկանդալը» և կապը Խաչատուր Սուքիասյանի հետ

Խաչատուր Սուքիասյանի բիզնես կայսրության համատեքստում առանձին և առավել զգայուն դրվագ դարձավ 2025 թվականի այսպես կոչված «ալմաստների սկանդալը»՝ մի պատմություն, որտեղ իրավապահ մարմինների պաշտոնական հայտարարությունները համադրվում են ոչ ֆորմալ կապերի, անվանական

սեփականատիրության և նախկինում հաջողակ բիզնեսի կտրուկ անկման հետ:

2025թ. հունիսին Ռուսաստանի ԱԴԾ-ն (ՖՍԲ) և Քննչական կոմիտեն հայտնեցին «Ալրոսա» ընկերությունից ալմաստների հափշտակության սխեմայի չորս մասնակիցների ձերբակալության մասին, որին հաջորդել էր մաքսանենգությունը դեպի Հայաստան: Ըստ ԱԴԾ վարկածի՝ արտահանման ուղին գլխավորում էին Հայաստանից Բաղիկյան եղբայրները, որոնք թաքնվել են և հայտարարվել միջազգային հետախուզման մեջ: Խուզարկությունների ընթացքում առգրավվել է շուրջ 200,000 կարատ տեխնիկական ալմաստ, որոնք օգտագործվել են ավելի թանկարժեք հումքը փոխարինելու համար: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

ՌԴ ԱԴԾ-ն հայտարարել է, որ մաքսանենգությունն իրականացվել է **«ԱԴՄ Դայմոնդս»** (ADM Diamonds) ընկերության միջոցով, որի շահառուն, ըստ ռուսական կողմի պնդման, կապված է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի հետ: Նույն օրը Սուքիասյանի մամուլի քարտուղար Աննա Մկրտչյանը հրապարակավ հերքեց այս տեղեկությունը՝ հայտարարելով պատգամավորի և նշված ընկերության միջև որևէ կապի բացակայության մասի:

Այս առումով բաց է մնում ՌԴ ԱԴԾ հայտարարություններում հիշատակված «ալմաստների գործին» Խաչատուր Սուքիասյանի առնչության բնույթի և աստիճանի հարցը. մի հարց, որին մինչ օրս չի տրվել միանշանակ հանրային պատասխան:

«ԱԴՄ Դայմոնդս» ալմաստագործական գործարանը բացվել է 2019 թվականի վերջին Աբովյանում (Կոտայքի մարզ): Ընկերությունը հիմնադրվել է 2017 թվականին:

Էլեկտրոնային Ռեգիստր
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարի գալուստ, a.beglarian
Ելք համակարգից

Սկիզբ Նոր հայտ Հայտի կարգավիճակ Որոնում Ուղեցույց *Անձնական տիրույթ*

ARM ENG RUS

«ԷՑ.ԴԻ.ԷՄ. ԴԱՅՄՈՆԴՍ» ՄՊԸ

Կարգավիճակ	Լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Գրանցող մարմին	ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստր
Գտնվելու վայրը	Հայաստան, ԿՈՏԱՅՔ, ԱԲՈՎՅԱՆ, Է. Պետրոսյան, 1/1/5 շ., 2201
Գրանցման համար	42.110.949344 / 2017-03-10
ՀՎՀՀ	03544354
ՁԿԴ	50367666
Նորացված գրառում	42.110.949344 / 2017-03-10
ԻՇ հայտարարագրեր	Դիտել

Արդեն նախնական փուլում հայկական մամուլը և գործարար համայնքի ներկայացուցիչները ոչ պաշտոնապես գործարանի իրական սեփականատեր էին անվանում Խաչատուր Սուքիասյանին՝ դրա հետ կապելով ձեռնարկության արագ աճն ու գերիշխող դիրքը՝ որպես ոլորտի խոշորագույն խաղացող:

Բացման արարողությանը ներկա էր հենց ինքը՝ Սուքիասյանը, սակայն պատասխանելով սեփականության մասին ուղիղ հարցին՝ նա հայտարարեց, որ գործարանը պատկանում է Արմեն և Արտակ Բաղիկյաններին՝ նրանց անվանելով «իրեն մոտ կանգնած մարդիկ»:

Хачатур Сукиасян на церемонии открытия алмазообрабатывающей компании ADM (2 декабря 2019). Абовян

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների համաձայն՝ ներկայումս **«ԱԴՄ Դայմոնդ»** ընկերության միանձնյա սեփականատերը (100%) Արթուր Օհանջանյանն է: Մինչև 2024 թվականի փետրվարը ընկերության սեփականատերեր են գրանցված եղել Մարինե և Ասպարիկ Բաղիկյանները՝ գործարար Արտակ Բաղիկյանի ծնողները: Արթուր Օհանջանյանն իր հերթին հանդիսանում է Արտակ Բաղիկյանի քավորը:

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով	Բաժնեմասի նկատմամբ գրավի կամ արգելանքի մասին տեղեկություններ
ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ՄԱՎՐԻԿԻ Անձնագիր հ/հ 012354544 2020-01-23 տրվ. 012 ի կողմից ՀԾՀ 2905730064 Հասցե՝ ՀԱԼԱԲՅԱՆ Փ. / Շ / 26 / ԲՆ. 37 ԱՋԱՓՆՅԱԿ 0036 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2024-02-07	100 %	100000000	գրառված չեն

Ընդ որում, ուշադրության է արժանի ընկերության գործունեության դինամիկան: Եթե 2022–2024 թվականներին **ADM Diamonds**-ն իրականացնում էր ադամանդների վերաարտահանման զգալի ծավալներ, ապա 2025 թվականին ցուցանիշները կտրուկ նվազել են: Հայաստանի Պետական եկամուտների կոմիտեի տվյալներով՝ 2025 թվականի առաջին կիսամյակում ընկերությունը չի ընդգրկվել խոշոր հարկատուների ցանկում, մինչդեռ 2024 թվականի նույն ժամանակահատվածում այն զբաղեցնում էր 141-րդ տեղը՝ հայտարարագրելով շուրջ 1,1 միլիարդ դրամի հարկային վճարումներ: Ոլորտային աղբյուրների տեղեկություններով և խմբագրության դիտարկումներով՝ 2026 թվականի դրությամբ գործարանը փաստացի օպերացիոն գործունեություն չի իրականացնում:

Սուքիասյանների ավիաընկերությունը՝ «թիվ 1 բորտի» շահագործող

FlyOne Armenia ավիաընկերությունը Հայաստանի քաղաքացիական ավիացիայի շուկա մուտք գործելու պահից ուշադրություն գրավեց ոչ միայն որպես նոր փոխադրող, այլև ընկերության սեփականատիրության կառուցվածքի պատճառով: Լրագրողական հետաքննությունները և բաց կորպորատիվ աղբյուրների տվյալները մատնանշում են դրա փոխկապակցվածությունը Խաչատուր Սուքիասյանի ընտանիքի հետ՝ ազգականների և **SIL** խմբի ընկերությունների ուղղակի մասնակցության միջոցով:

Հրապարակված տվյալների համաձայն՝ Խաչատուր Սուքիասյանի եղբայրը՝ Էդուարդ Սուքիասյանը, ուղղակիորեն տիրապետում է FlyOne Armenia-ի բաժնետոմսերի 20%-ին: Եվս 9% բաժնետոմս պատկանում է **SIL Capital** ընկերությանը: https://hetq.am/ru/article/164744

FlyOne Armenia-ի սեփականատիրության ընդհանուր կառուցվածքն ունի հետևյալ տեսքը.

- **46%** — մոլդովական «Fly One S.R.L.» ընկերություն.

- **54%** — հայաստանյան ֆիզիկական և իրավաբանական անձինք: https://flyone.eu/ru/AboutFLYONE/About-company.

Խաչատուր Սուքիասյանն այս դեպքում ռեգիստրներում չի նշվում որպես ավիաընկերության ուղղակի բաժնետեր: Միևնույն ժամանակ, մի շարք լրատվամիջոցներ և լրագրողական հետաքննություններ բնութագրում են FlyOne Armenia-ն որպես Սուքիասյանների ընտանեկան բիզնես՝ մատնանշելով ընտանիքի հետ կապված անվանական սեփականատերերի և փոխկապակցված անձանց առկայությունը, այդ թվում՝ մերձավոր ազգականների:

Հանրային ազդակներ և ընտանիքի մասնակցություն

Սուքիասյանների ընտանիքի անդամների հանրային ներկայությունը FlyOne Armenia-ի հաղորդակցության մեջ արձանագրվում է ավիաընկերության գործունեության հետ կապված մի շարք դրվագներում: Մասնավորապես, ընտանիքի ներկայացուցիչները մասնակցել են չվերթների մեկնարկի արարողություններին և ավիապարկի համալրման միջոցառումներին, այդ թվում՝ Airbus A321 ինքնաթիռի ժամանմանը,

որտեղ հրապարակայնորեն հանդես է եկել Էդուարդ Սուքիասյանը:

2022 թվականին Խաչատուր Սուքիասյանը նույնպես հրապարակավ մեկնաբանել է իր ընտանիքի կապը ավիաընկերության հետ՝ հայտարարելով, որ ինքը դրա հիմնադիրը չէ, սակայն իր ընտանիքի առանձին անդամներ հանդես են գալիս որպես բաժնետերեր: Նա ընդգծել է, որ **FlyOne Armenia**-ի գործունեությունը կշարունակվի նույն ռեժիմով՝ նշելով ընկերության կողմնորոշումը դեպի լուքոսթեր (ցածրարժեք) մոդելը և ավիատոմսերի գների նվազեցումը: https://am.sputniknews.ru/20220117/moya-semya-vladeet-chastyu-aktsiy-khachatur-sukiasyan-ob-aviakompanii-flyone-armenia-37619600.html

Քաղաքական համատեքստը և հնարավոր արտոնությունները

FlyOne Armenia-ի կորպորատիվ կառուցվածքում Սուքիասյանների ընտանիքի ազգակցական կապերը մի շարք հրապարակումներում դիտարկվում են ոչ թե մեկուսացված, այլ ավելի լայն քաղաքական համատեքստում: Ավիաընկերության բաժնետիրական կապիտալում Խաչատուր Սուքիասյանի մերձավոր ազգականների մասնակցության հետ մեկտեղ՝ սա թույլ է տվել մի շարք լրատվամիջոցների խոսել FlyOne Armenia-ի նկատմամբ հնարավոր ինստիտուցիոնալ և ոչ ֆորմալ արտոնությունների մասին:

Այս համատեքստում ամենացայտուն դրվագներից մեկը դարձավ Հայաստանի Հանրապետության պետական օդանավի շահագործումը:

2023 թվականի սեպտեմբերից ի վեր չվերթների առցանց հետևման միջազգային ծառայություններում, մասնավորապես՝ **FlightAware**-ում, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և նախագահ Վահագն Խաչատուրյանի արտասահմանյան թռիչքները սկսեցին նշվել **FIE4001** և **FIE4002** կոդերով:



FIE կոդը հանդիսանում է ICAO-կոդ, որը ամրակցված է **FlyOne Armenia** ավիաընկերությանը, ինչը մատնանշում է, որ հենց այս ընկերությունն է հանդես եկել որպես «թիվ 1 բորտի» շահագործող (օպերատոր): Այսպիսով, կառավարական օդանավի շահագործումը փաստացիորեն կապվել է մասնավոր առևտրային ավիափոխադրողի հետ:

Ընդ որում, լրատվամիջոցների տվյալներով, FlyOne Armenia-ն սկսել է պետական օդանավի փաստացի շահագործումը դեռևս ավելի վաղ՝ 2023 թվականի սեպտեմբերի 8-ից, այսինքն՝ մի քանի ամիս առաջ այն բանից, երբ համապատասխան տեղեկատվությունը սկսեց համակարգված կերպով արտացոլվել թռիչքների հետևման միջազգային հարթակներում: https://hetq.am/ru/article/164744

Երևան — Ստամբուլ երթուղին. քաղաքական որոշում, կոմերցիոն ձախողում և կախվածություն թուրքական երկնքից

Նախքան FlyOne Armenia-ն կդառնար «թիվ 1 բորտի» օպերատորը, ավիաընկերությունը գործարկել էր Երևան — Ստամբուլ երթուղին, որը հենց սկզբից հայտնվեց թուրքական իշխանությունների որոշումներից կախվածության մեջ:

2022 թվականի սկզբին FlyOne Armenia ավիաընկերությունը թուրքական իշխանություններից թույլտվություն ստացավ Երևան — Ստամբուլ — Երևան երթուղով չվերթներ իրականացնելու համար:

2022 թվականի փետրվարի 2-ից մեկնարկեցին ուղիղ թռիչքները «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից: https://armeniatoday.am/region-ru/411706/

Երթուղին գործարկվեց դրա ռազմավարական և սոցիալական նշանակության մասին հայտարարությունների ֆոնին՝ չնայած հաստատված կայուն ուղևորահոսքի բացակայությանը:

Փորձագիտական գնահատականները գործարկումից առաջ

